ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 116

31 օգոստոսի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հատիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 57 որոշման թիվ 8 հավելվածում փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 53 որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հանձնարարել Մարալիկի երաժշտական դպրոցի տնօրեն Լուսինե Կարապետյանին կատարելու Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 31 օգոստոսի 2012 թվականի թիվ 53 որոշման պահանջները:
2. Հանձնարարել երաժշտական դպրոցի ուսմասվարին ուսումնական տարիֆիկացիան կազմելիս առաջնորդվել ըստ գործող օրենքի:
3. Երաժշտական դպրոցի տնօրեն Լուսինե Կարապետյանի վրայից հանել դաշնամուրի դասատուի պարտականություններն՝ որպես վարչական աշխատանքներ իրականացնող:
4. Երաժշտական դպրոցի դաշնամուրի դասատու Սվետա Դոգուզովային ազատել աշխատանքից՝ ըստ գործող օրենքի:
5. Հանձնարարել երաժշտական դպրոցի տնօրենին դաշնամուրի դասատու Եպրաքսյա Խաչատրյանին նշանակել սոլֆեջոյի դասատու:
6. Հանձնարարել համապատասխան պատասխանատուներին մինչև սեպտեմբերի 20-ը իմ հաստատմանը ներկայացնել տարիֆիկացիան:
7. Հանձնարարել քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Գեղամ Գրիգորյանին հսկողություն իրականացնել սույն որոշման կատարմանը և վերահսկողություն սահմանել դպրոցի աշխատանքային կարգապահությանը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ